

2022-2023 ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՒՑԹԻ ՔՆՆԱԿԱՆ ՆՄՈՒՇ
CONCOURS D'ENTREE 2022-2023/ EXEMPLE

ARMENIEN (pour les candidats étrangers) /

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (օտարերկրացի դիմորդների համար)

Իրավաբանական, կառավարման, մարքեթինգի, ֆինանսների ֆակուլտետներ

Facultés de Droit, gestion, marketing, finance

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

Առաջադրանք 1 (20 միավոր)

2-3 նախադասությամբ պատասխանե՛ք հարցերին (յուրաքանչյուր կետադրման սխալի դիմաց հանվում է է 0, 25 միավոր, յուրաքանչյուր ուղղագրական սխալի դիմաց հանվում է 0,5 միավոր):

Աշխարհահռչակ Հաֆիզն ապրում էր Շիրազ քաղաքում՝ մի անշուք տան մեջ, որը կոչվում էր Իրանի վարդ: Բանաստեղծի տան արևելահայաց պատի երկարությամբ՝ մի աննշան բարձունքի վրա, վարդի թփեր կային տնկած, որոնք երփնավառ ծաղիկներով բուրումնալից էին դարձնում Հաֆիզի կյանքը, և որտեղ երգեցիկ թռչուններն իրենց քաղցրահնչյուն երգերով, մեղմօրոր դայլայլներով նրա հոգին լցնում էին անհուն բերկրանքով: Հաֆիզը ինքն էր խնամում այդ վարդերը՝ նրանց համարելով իր ուրախությունն ու հարստությունը:

Լուսնկա մի գիշեր բանաստեղծը, պատի հետևից հանկարծ ոտնաձայներ լսելով, նայեց ու պարտեզում տեսավ ինը-տասը տարեկան մի աղջիկ՝ գեղեցիկ դեմքով ու արտահայտիչ աչքերով, որը հապշտապ իր վարդերն էր քաղում: Շուտով նա փունջ կապեց ու փախավ: Նա ապշած գրեց.<< Թո՛ղ վարդը իր թփին: Եթե քաղվի, կմեռնի, և դու չես տեսնի նրա գեղեցկությունը, չես առնի հոտը>>:

Մյուս օրը աղջիկը դարձյալ հայտնվեց և զամբյուղը լցնելով վարդերով՝ հեռացավ:

Հաֆիզը հետևեց նրան. աղջիկը մտավ շուկա և մոտենալով շքեղ հագնված մի կնոջ՝ վարդերի փունջը մեկնեց նրան՝ ասելով.

-Գնեցե՛ք այս վարդերը. սրանք Ձեզ նման չնաշխարհիկ են:

Կինը, նրա խղճուկ կերպարանքից մեղմանալով, վերցրեց փունջը ու գնից հինգ անգամ ավելի վճարեց: Աղջիկը այնուհետև քայլեց դեպի ծուռումուռ նրբանցքը և դժվարությամբ հասավ կիսախարխուլ տնակի, որտեղ նստած էր տանջալլուկ մի պառավ կին: Այդ կինը կկործանվեր, եթե նախախնամությունը նրա մոտ չբերեր բարեսիրտ աղջնակին, որը ինքն էլ անօթևան մի երեխա էր: Այս բոլորը իմանալով՝ Հաֆիզը ոչ միայն ներեց աղջկա գողությունը, այլև տարավ նրան տուն ու որդեգրեց:

1. Ինչպիսի՞ն էր Հաֆեզի պարտեզը:

2. Ի՞նչ տեսավ բանաստեղծը լուսնկա մի գիշեր:

3. Ինչու՞ էր աղջիկը ծաղիկ վաճառում:

4. Ինչպե՞ս վարվեց Հաֆեզը, երբ իմացավ ճշմարտությունը:

Առաջադրանք 2. (20 միավոր)

Գրե՛ք շարադրություն (7-8 նախադասությամբ) «Գարուն» վերնագրով (յուրաքանչյուր կետադրման սխալի դիմաց հանվում է է 0, 25 միավոր, յուրաքանչյուր ուղղագրական սխալի դիմաց հանվում է 0,5 միավոր):

